

## ԱՄՍԱԳԻՐ ԼՈՒՄԱՆ

Այսօր Լուման մտնում է իւր տասներորդ տարեցը՝  
ջանը և հրատարակում ենք անսարետք Լումայի առա-  
ջին համարը։

Լումայի նախկին համարների բովանդակութիւնը  
ինը կարող է վկայել իւր համար, թէ որքան նա մի  
կարեոր հայկական հրատարակութիւն է եղել։ Այն, մեր  
տուած նիւթերը մօդայական չեն եղել. մենք շատ լաւ  
գիտենք, որ մեր թերթի բովանդակութիւնը մատչելի  
էր գլխաւորապէս գրականութեամբ և պատմութեամբ  
հետաքրքրուող մարդկանց. ներքեւ՝ թուոցիկ յիշողու-  
թեամբ առաջ բերած Լումայի անցեալ ինն տարուայ ըն-  
թացքում հրատարակուած նիւթերի ցանկից ընթերցողնե-  
րը կտեսնեն, թէ ինչ ուղղութեան ենք հետեւ մենք, ինչ  
ընտիր ոյժերի օգնութեամբ ենք գործել և թէ որ աս-  
տիճան լուրջ է եղել Լումայի բովանդակութիւնը։

Վիպական-գեղարուեստական մասում մենք տուել  
ենք ուսուահայ ամենանշանաւոր գրողների գեղարուես-  
տական երկերը. օր. Պուշկանի՝ Կնունը, Վարդի իւղը  
մահաբեր, Յանոսը. Մուրացանի՝ Անդրէաս երէց պատ-  
մական վէպը, Առաքեալը, Նոյեան ազուաւը, Գլթութեան  
քոյրեր, և այլն. Շիրվանզադէի՝ բոլոր վերջին գործերը,  
օր. Վարդան Ահրումեան վէպը, Հաւատարիմ ընկերներ,  
Գաղափարի գերին են. Փափազեանի՝ Հաղար և մի գիւ-

շերային զլոյցներ, Ալէմգիր, Ազէրֆէղա վէպերը. Ցով.  
Յովիաննիսեանի և ուրիշների բանաստեղծութիւններն  
ու պօէմաները. Գամառ-Քարիպայի՝ Անիի առումը և  
ուրիշ բանաստեղծութիւններ. Տաճկահայ վիպասաննե-  
րից՝ Գուրեանի Արտաշէս առաջին անտիպ գրուածքը և  
այլն և այլն:

Պատմական յօդուածներին մենք միշտ պատուաւոր  
տեղ ենք տուել «Լումայ»ի էջերում և այդ կողմից չեն  
պակասել մեզ լաւագոյն ոյժեր.—մենք հրատարակեցինք  
յայտնի գիտնական նորարր Բիւզանդացու պատմական  
ուսումնասիրութիւնները, Քարամեանի՝ Հայերը Բիւ-  
զանդիայում և Հարիւր տարի առաջ խիստ կարևոր յօ-  
դուածները, Ե. Օահազիզի բազմաթիւ պատմական  
գրուածքներն ու կենսագրութիւնները, Նորա բազմակող-  
մանի ուսումնասիրութիւնները մեր ամենահամակրելի  
գրադէտ Մ. Նալբանդեանի կեանքի և գործունէութեան  
մասին, Կոստանեանի՝ Եղիշէի պատմութեան բնագիրն  
ու Շարժի տարեգրութիւնը Հայոց մէջ, Արշակ Տէր-Մի-  
իշեանի պատմական և բանասիրական հետազօտութիւն-  
ները, Եղեանի՝ Էջմիածնի մայր Աթոռի և ռուս կառա-  
վարութեան յարաբերութիւնների սկիզբը, Կ. Պօլսի մի  
յայտնի գրագէտի (ըննասէր) Եկեղեցական-պատմական  
գրուածները, այսուհետեւ մի շարք պատմական երկեր՝  
Տփխիսի աւերումը աղա Մահմադ խանի ձեռքով, Պար-  
սից տիրապետութեան վերջին տարին ևայլն ևայլն:

Ժողովրդագրական բաժնում հրատարակել ենք Ռաֆ-  
ֆիի Երկու ամիս Սիւնեաց և Աղուանից աշխարհներում  
ընդարձակ յօդուածը, մի տամկանայ գրողի «Մշոյ աշ-  
խարհ» ընդարձակ տեղագրութիւնը, Քաջրերունու ման-  
րակրկիտ յիշողութիւնները և ուրիշ բազմաթիւ ժո-  
ղովրդագրական նիւթեր:

Մատենագրական և մատենախօսական բաժինները  
միշտ զարգարել են մեր լաւագոյն գրողներ՝ Գար. Ենգի-  
բարեան՝ իւր ըննադատական անաչառ ուսումնասիրու-

թիւններով, իս. Յարուբիւնեան իւր բանասիրական յօդուածներով և Քրիչը իւր մատենախօսութիւններով, Մին. Բերբերեանը իւր գրականութիւն և կեանք յօդուածների հետաքրքրական շարքով, որ մեղ ծանօթացնում է հայ և ռուս գրական աշխարհի հետ Մելլ. աե. Մուրատեանը իւր Պետրոս Շանշեան կենսագրութեամբ, Ա. Մանդինեան՝ իւր բարոյախօսական յօդուածներով, Ա. Զիջինկարեան Եւրոպական կեանքի ռուսումնասիրութիւններով, Ղ. Աղայեան եւ Ռ. Խանազաւեան Բէլլամիի յայտնի վէպի թարգմանութեամբ, մի շարք թարգմանիչներ երոպական և ռուս վէպերի թարգմանութիւններով, և այլն և այլն:

Տալով այսքան բազմակողմանի նիւթ և հրատարակելով մի մեծածաւալ գրական-պատմական հանդէս, իննը տարի շարունակ մենք ամեն դժուարութիւն յանձն ենք առել մեր սիրած գործին անձնուիրութեամբ ծառայելու։ Իննը տարի մենք կռուել ենք նիւթական սղութեան, հայ մարդու անընթերցասիրութեան, հայի նեղ և շարամիտ կուսակցական ոգու հետ, զոհել ենք մեր թէ ֆիզիքական և թէ մտաւոր ոյժերը, բայց չենք ընկճուել ոչ մի դժուարութեան առաջ հայ լեզուի տարածման, հայ գրականութեան պահպանութեան համար աշխատելու և հայ ժողովրդի ինքնագիտակցութեան զարգացման մերովսանն նպաստելու համար։ Մենք շատ լաւ գիտենք, որ այս վիճակը անբաժան է եղել հայութեան համար վաստակող, նորա թագ ու պարծանք կազմող ամեն մատենագիրներից, սկսած Խորենացուց մինչ և մեր օրերը։ Աբովեան և Նազարեան, Նալբանդեան և Պատկանեան, Ռաֆֆի և Պարոնեան իջան գրական ասպարէզից նիւթական յետին կարօտութեան մէջ։

Սակայն մենք հաւատում ենք յառաջադիմութեան օրէնքին և վստահ յուսով սկսում ենք ամսաթերթ ըլումայշ-ի հրատարակութիւնը առաւել մեծ եռանդով։ Մեղ թում է, թէ այժմ, երբ մամուլի աղատութեան մասին

Խոսքերն ըստ երևութին գրական օրէնք են դառնալուր երբ պետութիւնը բարւոք է համարում իւր հպատակ ժողովրդների էական շահերի ուսումնասիրութեան աւելի մեծ չափով գոհացում տալու, երբ միւս կողմից հետեաբար մամուլը զօրեղ հասարակական գործօն է դառնալու, մեր հանդէսը, իւր լուրջ աշխատակիցների ստուար խմբով, որոնք երկրի ազգաբնակութեան պատմութեան և գրականութեան քաջ ծանօթ մարդիկ են, մի որոշ ծառայութիւն կարող է մատուցանել մեր ժողովրդին, նորա էական շահերին:

Ոչ ոք հայ հանդէսներից չի կարող այնքան պարծենալ իւր աշխատակիցների անուններով, որքան Շ. ումանա:

Առաջ մեր հանդէսը իբրև նախ վեցամսեալ և ապա երկամսեայ հրատարակութիւն, այլ նպատակներ և ծրագիր ունէք. նորա առաջին և զլխաւոր նպատակըն էր բացի գեղարուեստական ճաշակ զարդացնելուց՝ մեծ չափով ծառայել մեր ժողովրդի պատմութեան և ժողովրդագրութեան ուսումնաւիրութեան, իսկ այժմ, հետևելով միևնոյն նպատակին, մենք յայտնի չափով փոխում ենք Շ. ումանայի բովանդակութիւնը և այսուհետեւ, բացի գրականական նիւթեր տալուց, մենք որոշ ուշադրութիւն պիտի դարձնենք նաև առօրեայ կենսական խնդիրներին. Այս նպատակով էր, որ մենք, Շ. ումանա ամսագիր գարձնելով, աւելացրինք և մի նոր բաժին—Ներքին տեսութիւն, ուր մենք պիտի աշխատենք լուսաբանել թէ ընդհանրապէս ուսումնական և թէ մեր կեանքին վերաբերեալ հասարակական, տնտեսական, օրէնսդրական, գրական և պատմական խնդիրները. Մենք ուրախութեամբ տեղ պիտի տանք մեր հանդիսում և այն բոլոր գրուածներին, որ մեր հարեան ազգերի կեանքից տեղեկութիւններ կամ լուրջ ուսումնասիրութիւններ կպարունակեն:

Մեր նշանաբանը լինելու է՝ կանոնաւոր յառաջադիմութիւն, ճշմարտութեան հաւատ, օրինաւորութիւն և

հարեւան ազգերի հետ կատարեալ խաղաղ կենակցութիւն և համերաշխ դարդացումն, Մենք կատարեապէս համոզուած ենք, որ մեր կեանքում տեղի ունեցող չարեների մեծագոյն մասի պատճառները բղխում են այն անմիտ և նեղ կուսակցական հակումներից, որոց ազգեցութեան տակ դործում են շատերը. Հասել է ժամանակը, որ մեր ընթերցող դասակարգը դիտենայ յարգել և լսել ճշմարտութիւնը ամեն մի անկեղծ հայի բերանից և որ ամեն մի իսկական և մտածող հայ իրաւունք ունի իւր լուման դցելու ազգային յառաջադիմութեան դանձանակի մէջ:

Ահա այս հաւատով և սկզբունքներով գալիս ենք հրատարակելու վերափոխուած «Լուման», լիայոյս միանդամայն, որ հայ հասարակութիւնը, որը մինչև այսօր էլ բաւականաչափ գնահատել է մեր հանդիսի լուրջ բովանդակութիւնը և ոգին՝ չի զլանալ մեզ այսուհետեւ ևս կարեոր խրախուսանը, որին անկասկած կարօտ է մեր մտաւոր գործունէութեան տատասկոտ ասպարիցում ամեն մի հասարակական գործիչ:

ԳԻՒՏ Ա. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ